ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 12.03.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/25

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) քննելով «Յունիթուլզ» ՍՊԸ-ի 19.02.2018թ. ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. «Յունիթուլզ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Յունիթուլզ» ՍՊԸ-ն 19.02.2018թ. Խորհրդին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Պատվիրատուի կողմից սահմանված պատասխանատու ստորաբաժանումը գնման հայտը մասնավորապես դրանում ներառված գնման առարկայի բնութագրերը կազմել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ Օրենք) 13-րդ հոդվածի 1-ին կետի, նույն հոդվածի 2-րդ կետի 1-ին, 2-րդ, 3-րդ ենթակետերի, նույն հոդվածի 5-րդ կետի, և ՀՀ կառավարության 4 մայիսի 2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» (այուհետ Կարգ) 22-րդ կետով սահմանված սկզբունքները արհեստական խոչընդոտներ ստեղծելով մրցակցային սկզբունքներով գնման գործընթացին մասնակցության համար:

Մասնավորապես՝

1. Գնման ընթացակարգի 1-ին, 3-րդ, 4-րդ և 7-րդ չափաբաժինների համար գնման առարկայի տեխնիկական հատկանիշների սահմանումը առանց շեղման որոշակի տիրույթի նախատեսման արհեստական կերպով բերում է նրան, որ միայն մեկ ընկերության կոնկրետ ապրանքանիշի ապրանք կարող է առաջարկվել, իսկ մեկ այլ ընկերության արտադրության ապրանքանիշի օրինակ՝ 100 գրամ ավել կամ պակաս քաշով, տաս միլիմետր ավել կամ պակաս երկարությամբ, 0.1 ձիաուժ ավել կամ պակաս հզորությամբ ապրանքը ի սկզբանե չի կարող համապատասխանել տեխնիկական պահանջին և դուրս է մնում մրցակցության դաշտից:

Արդյունքում խախտվել է Կարգի 22-րդ կետով սահմանված՝ գնման առարկայի բնութագրի չափանիշներին մեկից ավելի հնարավոր մասնակիցների բավարարման պահանջը և Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերի պահանջները:

2. Գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնի համար Հզորությունը՝ 6.8 ձիաուժ տեխնիկական հատկանիշի սահմանումը գնման առարկան բնութագրելու մասնագիտական կարողության անբավարարության արդյունքն է: Այն կապված է Մոմենտի ուժը ցուցանիշը Ձիաուժ ցուցանիշին սխալ վերլուծելու հետ: Իրականում հաշվարկը պիտի իրականացվի ըստ հետևյալ բանաձևի՝

Ձիաուժ = Մոմենտի ուժ * Ռոպեում պտույտների քանակ/5252

Տվյալ պարագայում ճիշտ հաշվարկված ցուցանիշը հավասար կլինի 3.589 ձիաուժի:

Հաշվարկման պարզեցված հաշվիչը հասանելի է http://www.metaris.com/hp-relations.php ինտերնետային կայքի էջում:

Հիմարար բանաձևերը ներկայացվում են Ռուսաստանի Դաշնության ГОСТ Р 52026-2009 ազգային ստանդարտում:

Համանման սխալի արդյունք է «բենզինի բաքի տարողությունը՝ 1.1լ. տեխնիկական բնութագրի սահմանումը»:

Արդյունքում սահմանվել է ի սկզբանե որևէ ապրանքի համար անհասկանալի հատկանիշ, որով բացառվել/սահմանափակվել է մրցակցային հիմունքներով գնման ընթացակարգին իրական մասնակցության հնարավորությունը:

3. Գնման ընթաղակարգի 7-րդ չափաբաժնի համար սահմանված է ոչ հստակ՝ յուղի ծախսը 5-9 խ.սմ/ր հատկանիշ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ երկտակտ շարժիչի տեխնիկական պահանջ է ներկայացվում, ապա անհրաժեշտ է հստակեցնել խոսքը բենզինի հետ խառնվող երկտակտանի յուղի մասին է, թե շղթայի քսուքային չորստակտանի յուղի:

Հարցի վերաբերյալ պահանջել եմ գնահատող հանձնաժողովի պարզաբանում, սակայն ստացել եմ զուտ ձևական հատկանիշներով օժտված, բովանդակությունից զրկված պարզաբանման հայտարարություն:

Գնման առարկայի նման ձևով կազմումը հակասում է Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներին և տարակերպ մեկնաբանության տեղիք է տալիս, իսկ պարզաբանման բացակայությունը գնման ընթացակարգի հնարավոր մասնակցին զրկում է գնման առարկայի բնութագրին համապատասխանող ապրանք առաջարկելու ներքին համոզմունքից՝ արհեստականորեն սահմանափակելով գնման ընթացակարգին մասնակցության հնարավորությանը:

Ավելին, եթե խոսքը շղթայի քսուքային յուղի մասին է, ապա նշված հատկանիշը Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված «կարիքների բավարարման» ուղղված հատկանիշ չէ, այլ մրցակցությունը սահմանափակող արհեստական հատկանիշ: Այս պնդումը ապացուցվում է նրանով, որ բենզինային սղոց արտադրողները առհասարակ չեն նշում նմանատիպ ցուցանիշ, քանի որ այն կախված է, թե որպեսզի ինչ թվով պտույտներով է աշխատում տվյալ գործիքը: Ավելին նմանատիպ ցուցանիշ առհասարակ բացակայում է մաքսային միության 2011թ. Հոկտեմբերի 18 ТР ТС 010/2011 տեխնիկական կանոնակարգում, ISO 6533-93, ISO 6534-92, ISO 22867-2014 միջպետական ստանդարտներում, որոնց միացել է Հայաստանի Հանրապետությունը:

4. Օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ կետը սահմանում է որևէ նշանին, ֆիրմային անվանմանը, արտոնագրին էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին հղում կատարելու բացառիկ պայման՝ գնման առարկայի՝ առանց դրանց բնութագրման անհնարինության:

Տվյալ պարագայում գնման ընթացակարգի 1-ին, 3-րդ և 4-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրի հատկանիշներում միաժամանակ ներառվել են և ապրանքային նշանը և տեխնիկական տվյալներ, որոնք ապրանքային նշանից առանձին լիարժեք կարող են նկարագրել գնման առարկան:

Արդյունքում նշված ապրանքային նշաններին համարժեք ապրանք առաջարկելու և այդ առաջարկվող ապրանքի հատկանիշները գնման ընթացակարգի տեխնիկական բնութագրում ներառված տեխնիկական հատկանիշներին չհամապատասխանելու պարագայում մասնակցի կողմից Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի ներկայացումը կարող է մեկնաբանվել որպես.

ա. գնման գործընթացում ստանձնած պարտավորության խախտում մասնակցի կողմից և արդյունքում կարող է բերել բարեխիղճ մասնակցի ներառում Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ կետում նշված ցուցակում.

բ. գնման գործընթացում ստանձնած պարտավորության խախտման բացակայություն, եթե առաջնային համարվի ապրանքային նշանին համարժեքության ապահովումը:

Ընկերությունը Խորհրդին ներկայացված բողոքով խնդրել է.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի, 13-րդ հոդվածի 1-ին կետի, նույն հոդվածի 2-րդ կետի 1-ին, 2-րդ, 3-րդ ենթակետերի, նույն հոդվածի 5-րդ կետի, 37-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետի, 46-րդ հոդվածի, 50-րդ հոդվածի 7-րդ կետի և ՀՀ կառավարության 4 մայիսի 2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 22-րդ կետի հիման վրա «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/13» ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին, 3-րդ, 4-րդ և 7-րդ չափաբաժինների մասով կայացնել գնման գործընթացը չկայացած հայտարարելու մասին որոշում:

Խորհրդում բողոքի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էր «Յունիթուլզ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Հովհաննես Մկրտումյանը:

2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը 05.03.2017թ. թիվ ԴՎԱ/781 գրությամբ Խորհրդին է ներկայացրել գրավոր դիրքորոշում, որով հայտնել է հետևյալը.

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/13 ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին, 3-րդ, 4-րդ և 7-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերում սահմանված չափորոշիչները վերցվել են հայկական շուկայում գոյություն ունեցող տնտեսվարող սուբյեկտների մոտ առկա գործիքների անձնագրային տվյալներից:

Հայաստանի Հանրապետությունում գործում են որոշակի ստանդարտներին համապատասխանող չափման միավորներ, տվյալ պարագայում՝ ձիաուժ, կիլովատ, սանտիմետր, կիլոգրամ, ապա ուսումնասիրած ուժային գործիքների տեխնիկական հատկանիշները վերահաշվարկվել են որոշակի կլորացմաբ և բեռերվել վերը նշված ցուցանիշների, բայց տեխնիկական բնութագրի հատկանիշները սահմանելիս մեր կողմից չի օգտագործվել «ոչ ավել կամ ոչ պակաս» բառերը:

Վերոգրյալից ելնելով հայտնում եմ, որ նշված ընթացակարգով հայտարարված չափաբաժինների տեխնիկական բնութագրերը սահմանվել են ոչ լիարժեք, որի վերաբերյալ պաշտպանության նախարարության համապատասխան աշխատակիցների միջոցով իրականացվել է լրացուցիչ ուսումնասիրություն, ինչի կապակցությամբ հայտնում եմ, որ համակարծիք ենք մասնակցի բողոքի բովանդակությանը:»:

Խորհրդում բողոքի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էին ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացուցիչներ Վասիլ Հովհաննիսյանը և Վալոդյա Նիկողոսյանը:

3. ԳԲԽ-ԷՍ-2018/25 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.

Խորհուրդն ուսումնասիրել է «Յունիթուլզ» (այսուհետ նաև՝ Ընկերություն) ՍՊԸ-ի կողմից 19.02.2017թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից Խորհրդին ներկայացված 05.03.2017թ. թիվ ԴՎԱ/781 գրությունը, ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/13 ծածկագրով գնանշման հարցման հրավերը.

ՀՀ պաշտպանության նախարարությունը հատուկ մեքենաների և սարքերի ձեռքբերման նպատակով հայտարարել է ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/13 ծածկագրով գնանշման հարցում (այսուհետ նաև՝ ընթացակարգ):

Բողոքի քննության նպատակով 22.02.2018թ. կայացած նիստի ժամանակ Ընկերության ներկայացուցիչը Խորհրդին հայտնեց, որ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/13 ծածկագրով ընթացակարգի Հրավերի տեխնիկական բնութագրում այնպիսի տեխնիկական հատկանիշներ են ներկայացվել, որոնք հանգեցնում են որոշակի կոնկրետի մոդելի և անհնարին են դարձնում մասնակցությունը տվյալ գնման գործընթացին:

ՀՀ պաշտպանության նախարարությունը 05.03.2017թ. թիվ ԴՎԱ/781 գրությամբ Խորհրդին է ներկայացրել գրավոր դիրքորոշում, որով հայտնել է հետևյալը.

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/13 ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին, 3-րդ, 4-րդ և 7-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերում սահմանված չափորոշիչները վերցվել են հայկական շուկայում գոյություն ունեցող տնտեսվարող սուբյեկտների մոտ առկա գործիքների անձնագրային տվյալներից: Հայաստանի Հանրապետությունում գործում են որոշակի ստանդարտներին համապատասխանող չափման միավորներ, տվյալ

պարագայում՝ ձիաուժ, կիլովատ, սանտիմետր, կիլոգրամ, ապա ուսումնասիրած ուժային գործիքների տեխնիկական հատկանիշները վերահաշվարկվել են որոշակի կլորացմաբ և բեեերվել վերը նշված ցուցանիշների, բայց տեխնիկական բնութագրի հատկանիշները սահմանելիս մեր կողմից չի օգտագործվել «ոչ ավել կամ ոչ պակաս» բառերը:

Վերոգրյալից ելնելով հայտնում եմ, որ նշված ընթացակարգով հայտարարված չափաբաժինների տեխնիկական բնութագրերը սահմանվել են ոչ լիարժեք, որի վերաբերյալ պաշտպանության նախարարության համապատասխան աշխատակիցների միջոցով իրականացվել է լրացուցիչ ուսումնասիրություն, ինչի կապակցությամբ հայտնում ենք, որ համակարծիք ենք մասնակցի բողոքի բովանդակությանը:»:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հեդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա՝ գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ չեն կարող սահմանվել մասնակցի՝ գնումներին մասնակցելու իրավունքի և որակավորման հետ կապված այնպիսի չափանիշներ, որոնք խտրական են և սահմանափակում են մրցակցությունը՝ անհիմն կերպով բարդացնում կամ պարզեցնում են հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին.

Օրենքի 13-րդ հոդվածի՝

- 1-ին մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:
- 2-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը՝ .

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

• 3-րդ մասի համաձայն՝ ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

Խորհուրդն արձանագրում է, որ Պատվիրատուն ընդունում այն փաստը, որ նշված ընթացակարգի 1-ին, 3-րդ, 4-րդ և 7-րդ չափաբաժիններով նախատեսված գնման առարկաների տեխնիկական բնութագրերը սահմանվել են ոչ լիարժեք և համակարծիք է «Յունիթուլզ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի բովանդակությանը:

Հաշվի առնելով Պատվիրատուի դիրքորոշումը՝ Խորհուրդը չի անդրադառնում բողոքում նշված գնման առարկաների տեխնիկական բնութագրերի՝ գնումների մասին ՀՀ օրեսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխանության հարցին:

Այսպիսով Խորհուրդը արձանագրում է, որ Պատվիրատուն ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/13 ծածկագրով ընթացակարգի 1-ին, 3-րդ, 4-րդ, և 7-րդ չափաբաժիններով նախատեսված գնման առարկաների տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանում «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝ 6-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով և Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով սահմանված պահանջներին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Յունիթուլզ» ՍՊԸ-ի 19.02.2018թ. ներկայացրած բողոքը բավարարել:

2. Պարտավորեցնել ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/13 ծածկագրով ընթացակարգի Հանձնաժողովին՝ ընդունել ընթացակարգի 1-ին, 3-րդ, 4-րդ և 7-րդ չափաբաժինները չկայացած հայտարարելու մասին համապատասխան որոշում:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ